

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին փետրվարի 7-ին ժամը 15:00-ին կայացավ Արմավիրի մարզի Ջրատատ համայնքի ղեկավարի 2019 թվականի երկրորդ կիսամյակի և 2019 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի մարզպետարանից հողաշինության բաժնի պետ Արմեն Դարբինյանը և Ջրատատի համայնքապետարանի աշխատակազմը, Ջրատատ համայնքի ղեկավար Սամվել Գալստյանը հանգամանալից ներկայացրեց 2019 թվականի երկրորդ կիսամյակի և 2019 թվականի տարեկան հաշվետվությունը: Հայտնեց Արմավիրի մարզպետարանի նեկայացուցիչին համայնքում կատարած աշխատանքների և 2019 թվականի բյուջեի կատարողականի վերաբերյալ, 97,2%, հողի հարկը տարեկան պլանով կատարվել է 62,6%, գույքահարկը 164,4%, շենք շինությունների հավաքագրումը կատարվել է 49,6%-ով:

Թ. Խաչատրյանի անվան դպրոցի շրջանավարտներին նվերներ է տրվել 188,900 (հարյուր ութսունուրեք հազար ինը հարյուր դրամ, գումարի չափով:

Գյուղի ճանապահրները աղացած ասֆալտը փռելու և հարթեցնելու համար տրամադրվել է 500,00(հինգ հարյուր)հազար դրամ:

Համայնքի մահացած ընտանիքներին տրվել է 50000/հիսուն հազր/ ՀՀ դրամ գումար գումար մահվան ծախսերի համար 24 ընտանիքի :

Մարտի 8-ի կապակցությամբ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ գումար ծախսվել է համայնքի ենթակայության տակ գործող հիմնակներում աշխատող կանանց նվերներ գնելու համար:

Ջրատատի մանկապարտեզի երկրորդ հարկի և բուժ. ամբուլատորիայի պատուհանները փոխվել, ծախսվել է 1579,5 /մեկ միլիոն հինգը հարյուր յոթանասունինը / հազար 500 դրամ:

Ջրատատի Բահակյան և Հոկտեմբերյան փողոցները ցերեկային լուսավորություն է անցկացվել, ծախսվել է 428,814/ չորսը հարյուր քսանույթը հազար/814 դրամ:

Ջրատատի բուժ. ամբուլատորիայի դիմացի հողակույտը տեղափոխելու համար հատկացվել 200,0 /երկու հարյուր հազար/ դրամ:

Ջրատատ համայնքի ղեկավար՝



Մ. Գալստյան

Արձանագրությունը կազմեց Ջրատատ համայնքի
ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝

Մ.Առաքելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործավարություն

2019 թվականի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 79 դիմումներ և առաջարկություններ, որից 36 բնակիչ դիմել են սոց. օգնության համար, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 641 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 318 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 45 որոշում, արձակվել է 18 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2019 թվականի ընթացքում համայնքի ավագնին գումարել է 12 նիստ, որից 6 արտահերթ և 6 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, արտահերթ նիստեր հիմնականում ավագանու անդամների նախաձեռնությամբ է գումարվել, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2019 թվականի բյուջեում: Հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2019 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, ավագանու քննարկման են ներկայացվել 36 դիմումներ և մի մասը ստացել իրենց համապատասխան լուծումները: Ավագանու կողմից հաստատվել է Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրանց հարակից ընդհանուր օգտագործման տարծքի բարեկարգման կարգը սահմանելու մասին որոշումը, իրավաբանական անձանց աղբահանության դրույքաչափի հարցը քննարկվել և վճար է սահմանվել: Համայնքապետարանը կապել է իրավաբանական անձաց հետ կապել է 11 պայմանագիր աղբաթափության հետ կապված և հետևել պայմանագրի կատարմանը:

3. Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

2019 թվականին կատարվել է 17 հա հացահատիկային մշակաբույսեր որից՝ ցորեն 5հա, գարի 3,0 հա, եգիպտացորենը 9,0 հա, հատիկաընդեղային մշակաբույսեր լոբու 2,55 հա, կարտոֆիլի 19 հա, բոստանային կուլտուրաների 10,0 հաորց սեխը 2,0 հա, ձմերուկը 8 հա, բանջարանոցային մշակաբույսեր՝ 100,85 հա որից կաղամբ 14,0 հա, վարունգի 4,0 հա, լոլիկի 16,0 հա, սեղանի ճակնդեղ 1,0 հա, սմբուկ 17,5 հա, տակտեղ 40,65 հա, գլազար 0,7հա, սոխ 1,0 հա, սխտոր 1,0 հա, կանաչ լոբի 2,0 հա, այլ 3,0 հա: կերային մշակաբույսեր, որից ամլյուտ 32,8 հա և այլ բանջարեղենի 3,0 հա : 2018 թվականին կատարվել են նաև երկրորդ բերքի համար կանաչի 6 հա, լոբու .----

Պտուղ և հատապտուղ, որից հնդավոր՝ 9,0 հա, կորիզավոր 8,1հա, ընկյուղ 0,5 հա, թուզ 0,2 հա, խաղող 5,0հա:

Բանջարանոցային մշակաբույսեր ջերմոցներում 56,0 հա:

4. Անասնազիտաբանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 350 գլուխ, որից՝ կովեր 84 գլուխ:

Խոզեր ընդամենը 74 գլուխ, որից մայր խոզեր 14 գլուխ:

Մանր եղջերավոր անասուններ ոչխարներ ընդամենը 69 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 9գլուխ, իսկ մնացած 60 գլուխ շիշակ:Ճագորներ ընդամենը 47 հատ, որից 22 մայր:Թռչունները ընդամենը 2935թև, որից 2672 թև սձան:

Մեղվաքնտանիք 70 :

Հացահատիկային մշակաբույսի հավաքված բերքը՝ ցորենը 260,0ց, գարին 235,0 ց, եգիպտացորեն 730,0 ց, հատիկաընդեղային լոբին 80,0ց, կարտոֆիլը 7030,0ց ձմերուկը 5040,0 ց, սխը 1160,0ց:

Բանջարեղեն կաղամբ 3960ց, վարունգ 2320,0ց, լոլիկ 9920,0ց, սմբուկ 7560,0ց, տակտեղ 16660,0ց, սեղանի ճակնդեղ 380,0ց, գազար 280,0ց սոխ 410,0ց, սխտոր 300,0ց կանար լոբի 395,0ց, այլ/կանաչի/ 625,0ց.:

Բանջարեղեն ջերմոցներում 43880,0ց, կերային մշակաբույս 3542,0ց . :

Պտուղ և հատապտուղ՝ հնդավորներ 1250,0ց, կորիզավոր 845,0ց, ընկյուղ 36,0ց, թուզ 12,0ց, խաղող 950,0ց:

5. Հողի հարկ և գույքահարկ

2019 թվականի ընթացքում համայնքային բյուջեով նախատեսվել է 5201,2 հազար դրամ հողի հարկ: 30.12.2019 թ.-ի դրությամբ հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 3550,4 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի հողի հարկի տարեկան պլանի 68,3 %: Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 5048, հազար դրամ: 30.12.2019 թվականի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 7716,8 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի գույքահարկի 169,2% -ը: 2019 թվականի բյուջեով նախատեսվել է տեղական սուբյեկտ 100,0 հազ.դրամ 30.12. 2019 թվականի մուտք է եղել համայնքի բյուջե 15,7հազ. դրամ: 2019 թվականին նախատեսվել է տեղական վճարներ 3062,8 հազ.դրամ

30.12. 2018թվականի դրությամբ մուտք է եղել համայնքի բյուջե 2459,9 հազ.դրամ: 2019 թվականին բյուջեով պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 58642,5 հազար դրամ , որը ֆինանսավորվել է 100 %-ով, համայնքի վարչական տարածքում գտնվող 2019թ. Սեփական եկամուտները ընդամենը նախատեսվել են 14345,5 հազար դրամ: 30.12.2019թվականի դրությամբ հավաքագրվել է 15312,2 հազար դրամ , սեփական եկամուտները կատարվել է 106,9% -ով:

2019 թվականի տարվեսկզբի ազատ մնացորդը վարչական և ֆոնդային մասերով կազմել 27904,5հազ դրամ:

Ծախսեր

Ջրատուտի համայնքապետարանը 01. 01. 2019 թվականից մինչև 30. 12. 2019 թվականի ընթացքում կատարել է հետևյալ ծախսերը՝

1. վճարել է ընթացիկ աշխատավարձ և հավելավճարներ 16548,8 հազար դրամ:
2. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է 117,6 հազար դրամ
3. համակարգչային ծառայության համար փոխանցվել է 375,4 հազար դրամ
4. փոխանցվել է էլեկտրոններգիայի և գազի ոգտագործման գումար 4190,0 հազ. դրամ
5. ծաղկեպսակների համար 0 դրամ
6. գրենական պիտույքներ ձեռքբերելու համար փոխանցվել է 398,5 հազար դրամ
7. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն 2650,0 հազար դրամ
8. աղբահանության համար 2500,0 հազար դրամ
9. տնտեսական միջոցներ ձեռքբերելու համար փոխանցվել է 43,8 հազար դրամ
10. տեղեկատվական ծառայություն 48,0 հազար դրամ
11. մանկապարտեզն ֆինանսավորվել է 15421,3 հազար դրամով
12. կապի ծառայություն 286,3 հազար դրամ
13. շենք շինության կապիտալ վերանորոգում 1579,5 դրամ
14. ներքին գործողումներ 417,0 հազար դրամ:
15. ներկայացուցչական ծախսեր 488,6 դրամ
16. գույքի և սարքավորումների վարձակալություն 0 հազար դրամ
17. տրանսպորտային նյութեր 329,4 հազար դրամ
18. հակակարտային կայանների լիցքավորում հեղուկ գազով 270,0 հազար դրամ
19. համայնքի փողոցները լուսավորելու համար ծախսվել է 428,8 հազար դրամ
20. փողոցների հարթեցման համար ծախսվել է 500,0 հազար դրամ
21. աշխատակազմի մասնագիտական զարգացման համար 0 հազար դրամ
22. նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին 0 դրամ
23. պարտադիր վճարներ փոխանցվել 35,3 հազար դրամ

24. գույքի ձեռքբերման համար ծախսվել է 0 դրամ

25. միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 0 դրամ:

6. Ազգաբնակչություն

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3175 մարդ:

2019 թվականի ընթացքում Ջրատառ համայնքում ծնվել է 22 երեխա, գրանցվել է 24 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ՝ 56 ընտանիք,

Համայնքում թոշակատուների թիվ՝ 318:

5. Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 481 աշակերտով, դպրոցը ունի 50 աշխատող, որից մանկավարժ 37-ը: Համայնքում գրծում է մեկ մանկապարտեզ, հաճախող երեխաների թիվը՝ 55, աշխատողների թիվը՝ 14:

6. Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի սրահ և մեկ աշխատող, գրադարանը չի աշխատում:

Մշակույթի տանը գործում է սզգագրական պարերի խումբ՝ 26 երեխաներով և սպորտի խմբակներ բռնցքամարտի, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

7. Առողջապահություն

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա, աշխատողները էիվը՝ 9, որից՝ 2-ը բժիշկ:

8. Ձինակոչ

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործունե աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2019 թվականի ձմեռային և ամառային զինակոչը ունեցել ենք 13 երեխա և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Համայնքի հիմնախնայիրներ


այ՝ Համայնքի հիմնախնայիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում << առօրյա ապաստան >> որը կկազմի մոտավորապես 450.000.000 ՀՀ դրամ:

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 10.000.000 ՀՀ դրամ:

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհորների հորատման և էլեկտրաֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 25.000.000 ՀՀ դրամ:

դ) Բուժարանի կառուցում 18900000 (տասնութ միլիոն իննը հարյուր) հազար դրամ:

Ջրատարի համայնքապետ



Ս. Գալստյան